№ 30. Կիրակի, հոկտեմբերի 2—1866. № 30.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առևտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտիցը մինչև Յունվարը քաղաքումս՝ 2 մանեթ 50 կոպ., դուրսը՝ 3 մանեթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվիլ կարելի է խմբագրողի մոտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Վաճառականը 1867 թվին: Տէրութիւնի կարգադրութիւններ: Տորգեր: Թիֆլիսի վաճառականութիւնին հարկաւոր է բիրժայ: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

„ՎԱՃԱՌԱԿԱՆԸ„

1867 ԹՎԻՆ:

Ահա, պատուելի ընթերցողներ, լրանում է մեր գործունէութեան 7 ամիսը և երեք ամսից յետոյ, այս ինքն յունվարի 1-ին կվերջանայ մեր էս տարվան շրջանը: Նոր տարուց սկսելու ենք նոր գործունէութիւն:

Բայց մինչև գալ տարվան գործունէութեան վրայ խօսելը, պէտքը չի լինիլ ասել երկու խօսք էս տարվան մեր գործի վրայ:

Էս տարի մեր գազեթի գինը տարին քաղաքումս 3 մ. լինելով և դուրս 4 մ., իսկ 10 ամսվան գինը քաղաքումս՝ 2 մ. 50 կ., իսկ դուրսը՝ 3 մ., չտվեց մեզ միջոց ուելի մեծ թերթի վրայ սկսել տպագրութիւնը, քան թէ ինչպէս հիմի տպվում է. թէպէտ շատ նիւթ բովանդակելու համար աշխատել ենք շատ անգամ մանր տառով լցնել մեր նումերները: Իսկ նիւթերի բովանդակութեան և ընտրութեան մասին դատելը մենք բոլորովին թողնում ենք մեր ընթերցողների վրայ, միշտ պատրաստ լինելով ընդունել բոլորի կողմից օրինաւոր և մեր ուղղութեան յարմար նկատողութիւններ: Թէ բերանացի և թէ թղթով մէկ քանիսից մենք ստացել ենք նկատողութիւններ գլխաւորապէս մեր առևտրական նիւթերին վերաբերեալ (որովհետև մեր կարդացողները մեծ մասով վաճառականներ են), թէ նրանք չեն հասկանում մեր գազեթումը գործածված Եւրոպացոց փողերի անունները և մէկ քանի բառեր առուտուրին վերաբերեալ և թէ մեր հաղորդած կուրսերը և առևտրական միւս տեղեկութիւնները հին են:

Էս երկու նկատողութիւններն էլ ուղիղ են, բայց առևտրական էդպիսի սկզբնական գիտութիւնները գազեթներումը չեն տրվում, բայց մենք էդ բանին ճար անելու համար մտադիր ենք գալ տարվան սկզբերին մեր գալ տարվան ստորագրվողներին ձրիաբար տալ մէկ փոքրիկ „Առևտրական բառարան„ որի մէջ համառօտ ամփոփված լինին թէ առուտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռուսի փողի հետ համեմատելով: Իսկ առևտրական տեղեկութիւնների և կուրսերի նոր լինելու համար մենք թղթակցութիւն ենք արել „Ռուսաց տելեգրաֆի ընկերութեան„ հետ, որ գտնվում է Պետերբուրգումը, մեզ գալ տարի մեր ամեն նումերների համար դեպեշներ գրելու ամեն շաբաթ առուտուրին և նմանապէս միւս հասարակական գործերին վերաբերեալ էնպէս որ մի և նոյն ժամանակը հետաքրքրական լինին և վաճառականների համար և աստիճանաւորների համար: Էս փոփոխութիւններն անելու հետ միասին մենք մտադիր ենք մեծացնել և հիմիկվան թերթը ½ ով, այս ինքն էնպիսի թղթի վրայ տպել, որ ամիսը 4 հիմիկվան կէս թերթի տեղ 5-ից մինչև 6 ը լինի իր մեծութեանով:

Բացի էդ փոփոխութիւնները կարգադրումենք, որ գալ տարի գազեթը կիրակի օրերով դուրս

գալու տեղ, որ շատ անյարմար էր տպարանի համար, դուրս գայ հինգշաբթի օրերով և էդպիսով կարողանայ նմանապէս հասնել և դրսի քաղաքների փոստային։

Որովհետև էս փոփոխութիւններն անելու հետ մեր ծախսերը համարեա թէ երկու անգամ աւելանում են, էսդուր համար մենք հարկաւոր ենք համարում նրանց ծածկելու համար աւելացնել և տարեկան ստորագրութենի գինը, թէ քաղաքում և թէ դուրսը նշանակելով 5 մ., որովհետև փորձով իմացված է, որ թէ փոստայի և թէ քաղաքում գազեթի բաժանողի ծախսը համարեա թէ հաւասար են։

Ս՞եր գազեթը գալ տարի էլ պէտք է պահպանէ իր հիմիկվան ուղղութիւնը, աշխատելով որքան իր միջոցները կներեն ծանօթացնել ընթերցողներին մանաւանդ առևտրական և տնտեսական գիտութիւններին վերաբերեալ գլխաւոր առարկաներին։ Միշտ աչքներիս առաջն ենք ունենալու նմանապէս մեր հայոց կրթութիւնը և ուսումը և դրան վերաբերեալ խնդիրները, առաջ քերելով լուսաւորեալ երկիրների մէջ ընդունված ուղղութիւնը և ուսումի ձևերը։

Գալ տարի էլ նմանապէս մեր գլխաւոր գործակիցը պէտք է լինի պ. Ա. Երիցեանցը, որն որ խոստացել է մեզ պատրաստել և վերոյիշեալ „Առևտրական բառարանը„։ Բացի սրանից մենք ունենալու ենք գալ տարի Ռուսաստանի և Կովկասի մէկ քանի քաղաքներումը թղթակիցներ, որոնք հաղորդելու են մեզ տեղական նորութիւններ, թէ առևտուրին և թէ հասարակական գործերին վերաբերեալ։

Հենց էս ամենից դուրս տարվան, „Վաճառականի„ ստորագրութիւնը բաց անելով, խնդրում ենք, որ մեր գազեթին 1867 թուին ստորագրվել ցանկացողները, յայտնեն մեզ իրանց կամքը մինչև նոյեմբերի վերջը, որ մենք կարողանանք ստորագրվողների թուի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար։

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՏՈՐԴԵՐ։

Կովկասեան Ինտենդանտի կառավարութիւնը հոկտեմբերի 10-ին նշանակված է Նախիջևանի հիւանդանոցին 1867 թուին հարկաւոր նիւթեղէնների հասցնելու տորդը։

Դորու հիւանդանոցի կոնտորայումը մի և նոյն օրը նշանակված է Էնտեղի հիւանդանոցին 1867 թուին հարկաւոր նիւթեղէնների հասցնելու տորդը։

Վանքի զինուորական հիւանդանոցի կոնտորայումը հոկտեմբերի 17-ին նշանակված է 1867 թուին էդ հիւանդանոցին հարկաւոր նիւթեղէնների հասցնելու տորդը։

Կովկասեան Ինժինների կառավարութիւնը հոկտեմբերի 10-ին նշանակված է Ախալցխայի բերդումը զանազան փոփոխութիւններ անելու տորդը։ Էս գործի համար նշանակված է 8995 մ. 42¼ կ.

Մի և նոյն տեղումը հոկտեմբերի 14-ին նշանակված է Ալէքսանդրոպոլի և Ախալքալաքի բերդերումը զանազան փոփոխութիւններ և չինութիւններ անելու տորդը։ Էս գործի համար նշանակված է 59,157 մ. 65 կ.

Մի և նոյն տեղումը հոկտեմբերի 17-ին նշանակված է Վլադիկավկազ քաղաքումը Թերգի կողմի զօրքերի զվարաւոր հրամանատարի համար երկու յարկանոց քարաշէն տան չինելու տորդը։ Էս գործի համար նշանակված է 39,709 մ. 39¾ կ.

Մի և նոյն տեղումը հոկտեմբերի 6-ին նշանակված է Զվարերումը զօրքի հրամանատարի տան մէջը և զինուորական հիւանդանոցումը զանազան փոփոխութիւններ և նոր չինութիւններ անելու տորդը։ Էս գործի համար նշանակված է 8618 մ. 65¼ կ.

Ստավրոպոլումը գտնված Զուբանի ինժիների կառավարութենումը հոկտեմբերի 14-ին նշանակված է Ստավրոպոլի զինուորական հիւանդանոցումը զանազան փոփոխութիւններ անելու տորդը։ Էս գործի համար նշանակված է 7740 մ.

Կովկասեան Պրիկազումը 1867 թուի յունվարի 19-ին նշանակված է պատաւոր քաղաքացի Բաղրատ Ալաղաթեանցի ժառանգներին պատկանած, Թիֆլիսումը գտնված երկու տան ծախելու տորդը, որոնցից մէկը Վելիամինովսկի քուչումն է քաղաքիս 2-դ մասումը և երկրորդը՝ քաղաքիս 3-դ մասումը և 1 կվարտալումը։

Կովկասեան մաքսատանը հոկտեմբերի 4-ին և հետևեալ օրերը, բաց ի կիրակիները և տօները, կծախվի 14 փութ և 2 ֆունտ կտաւ և 8 ֆունտ պրկալ։

Դաղստանի գաւառական կառավարութենումը նոյեմբերի 12-ին նշանակված է կուտրացած Թիֆլիսի քաղաքացի Զաքար Տէր-Խաչատուրեանցի 4,000 մ. զին դրած այդու ծախելու տորդը։

ԹԻՖԼԻՍ

Հոկտեմբերի 1—1866.

Վաճառականութենի հեշտացնելու և ծաղկեցնելու կանոնաւոր միջոցներից մէկն էլ բիրժան է։ Ամեն փոքր ի շատէ առևտրական քաղաք, ամեն վաճառականների ընկերութիւն Եւրոպայումը չեն կարող լինել առանց բիրժայի։ Նշանակած ժամանակը ժողովվելով, վաճառականները տեսնվում են միմեանց հետ կարելի է ասել ամեն օր. ամենքը միմեանց վրայ հսկողութիւն ունին, ամենքը իմանում են թէ իրանցից ո՞վ, ո՞րքան և ինչպիսի գործ է կատարում. էդ բոլորը ի հարկէ եթէ հեռու չէ վըտանդից, ակամայ աւելացնում է վաճառականի էհսաիբարը և ընդհակառակը վաճառականի փոքր ի շատէ անզգոյշ և վտանգաւոր վարմունքը միւսների աչքից թաղուն չկարողանալով լի-

Էդ բոլորի յարմար միջոցն է ի հարկէ միմիայն բիրժան: Առանց բիրժայի առևտրական քաղաքը նման է լուսաւորութենին հետևող և ցանկացող հասարակութենին առանց ուսումնարանի:

Կովկասեան կողմումը գլխաւոր առևտրական քաղաքը, Թիֆլիսը, պէտք է ունենայ ժամանակով շատ փառաւոր ապագայ, մանաւանդ երբ պատրաստ լինի երկաթէ ճանապարհը Սև Ծովից մինչև Կասպիս Ծովը: Բայց մինչև էն ժամանակն էլ Թիֆլիսն իր այժմեան առուտուրով կարող է հաւասարվել ոչ միայն Ռուսաստանի, այլ և սահմանից դուրսն էլած շատ նշանաւոր քաղաքներին, որոնք բոլորն էլ ունին վաղուց իրանց բիրժաները, իրանց քաղաքական հասարակական բանկերը և այլն:

Թիֆլիսի մէջ որքան մեզ յայտնի է մէկ քանի տարի առաջ էլած քաղաքագլխին առաջարկութիւն էլաւ բիրժայի հաստատելու մասին, մինչև անգամ պ. Ն. Արծրունու շինութիւնն էլ աչքի տակովն անցկացրին էդ նպատակի համար, բայց յետոյ բիրժայի խնդիրը մեզ անյայտ պատճառներով մնաց անկատար: Մեր ժողովուրդը կամենում է միշտ, որ ամեն լաւ բան տէրութիւնը սկսէր, տէրութիւնը հրաւիրէր և յետոյ մենք գործ սկսէինք: Բոլոր հոգսը տէրութենի վրայ թողնելն անկարելի է: Կառավարութիւնը ինքը ուրախութենով կօգնէ և գոհ կլինի, եթէ մենք մեր բարօրութենի համար հոգս անենք: Հիմի, երբ որ պատրաստվում է գործ դնելու բարձրադոյն հաստատված կանոնադրութիւնը քաղաքական կառավարութենի մասին. աւելորդ չէր լինի մեր վաճառականներին բիրժայի մասին հոգսանել: Մեր այժմեան թոյլ առուտուրին էլ կեանք և կենդանութիւն տվողը կարող է էլի բիրժան լինի: Շուտով յոյս ունինք վերադառնալ էս խնդրին:

Ա. Ե.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Ապրիլի 4-ի գործի մասին: Պետերբուրգից սեպտեմբերի 25-ին դեպեշայով գրում են, որ ամսի 24-ին բարձրագոյն քրէական դատարանը յայտնեց իր դատավճիռը 34 հոգուն: Սրանցից մէկը, քաղաքացի Ինչուտինի որդին, պէտք է խեղդվի, որովհետև թագաւորի սպանելու չար մտքի նախապատճառը սա է էլել, նմանապէս սա է հաստատել կոմունիստիկական ընկերութիւնը և գիտացել է Կարակոսովի չար դիտաւորութիւնը: Միւս յանցաւորներից 7 հոգի աքսորվելու են մշակութենի (կատորգա), իսկ 9 հոգի Սիբիր ընակեցնելու:

Խօլերայի մասին: Դեպեշայով գրում են Պետերբուրգից սեպտեմբերի 22-ին, որ էդ օրը էնտեղ մոլերին է կատարվել խօլերայի վերջանալու պատճառով:

Թիֆլիսի դաւառի ընակիչների թիւը: Նոր հաշաքած տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսի դաւառումը ընակվում են՝

21,538	ազնուականներ, տղայ ու աղջիկ,
8,993	հոգևորականներ „
25,290	քաղաքացիներ „
540,000	գիւղացիներ „
25,000	զինուորականներ „
4,835	օտարականներ:

626,191 հոգի բոլորը:

Հաշիներից երևում է, որ Թիֆլիսի դաւառումը 100 տղամարդու վրայ 92,7 կինարմատ է գալիս:

Նոր աղջկանց ուսումնարան Թիֆլիսումը: Լսում ենք, որ Թիֆլիսումը Զրկինենց եկեղեցու քահանայ, արժանապատիւ Տէր Ղևոնդ Խարազեանցի աշխատութենով մի և նոյն եկեղեցու պարապումը մօտիկ ժամանակներումս աղջկանց ուսումնարան պէտք է բացվի, որտեղ որ պատրաստված է մօտ 25 աղջկայ տեղ: Էդ ուսումնարանի հիմնադիր և գլխաւոր հոգատարը պ. Ենանեանցն է, որն որ խոստացել է տալ էդ ուսումնարանին տարեկան 200 մ. և վեց աղքատ աղջկանցը՝ հագուստ մինչև ուսումնարանումը սովորում լինին:

Էս լուրը շատ մխիթարական է առհասարակ բոլորի համար, որոնք աղջկանց ուսում առնելն ու կրթութիւնը ընդհանուր ժողովրդի լուսաւորութենի հիմն են համարում: Աստուած տայ, որ էս գործը բոլոր յաջողութենով գլուխ գայ և էս ուսումնարանը բարի օրինակ լինի և մեր միւս քահանաների և եկեղեցիներու համար:

Իրա ժամանակին մենք կհաղորդենք մեր ընթերցողներին էդ ուսումնարանի մասին մանրամասն տեղեկութիւններ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ սեպտեմբերի 14:

Իսօր 20,000 հակ բամբակ ծախվեցաւ էստեղ: Բամբակի գները բարձրանում են:

Պետերբուրգ սեպտեմբերի 13:

Կուրսը Լոնդոնի վրայ $30^3/_4$ պէնս:
Պարիզի վրայ . . 320 սանտիմ:
5% Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները $113^1/_4$ մանէթ:
— Երկրորդինը . 107 մանէթ:

Թիֆլիս հոկտեմբերի 1:

Շաքարը Ֆրանսիացոց . 9 մ. 60 կ.
— Ռուսինը . . 10 մ. 20 կ.
Արծաթը 84% . . . . . —
— 72% . . . . 65 մ.
Ոսկին . . . . . 6 մ. 40 կ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիֆլիսումը գրավաճառ Ա. Ինֆիրաճեանցի մագազինումը, Բէալեան գիմնազիայումը պ. Ա. Վարդանեանցի մօտ և „Վաճառականի“ խմբագրատանը ծախվում է էս 1866 թուին տպվված **Գ. Տ. Ա.-ի և Ա. Ե.-ի** աշխատասիրած **„ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ“** անունով գիրքը հատով 40 կոպեկով, իսկ գումարով 35 կոպեկով:

Գրավաճառ պ. Ի. Տէր Մելքայէլեանցի մագազինումը ծախվում է 1860 թուին տպված **Գ. Տ. Ա.-ի, Ա. Ե.-ի** և նրանց ընկերների աշխատասիրած **„ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ“** անունով երեխաների կարդալու գիրքը հատով 15 կոպեկով, իսկ գումարով 12 կոպեկով:

ДозволеноЦензурою

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

Խմբագրող եւ հրատարակիչ
Գ. Տէր Մելքասանցեանց: